

ՀՈԳԵԳՎՈՒԽՍԷՒ ԵՏՔ ՉՈՐՐՈՐԴ ԿՐՈՎԿԻ

08 ՅՈՒՆԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Բացատրութիւն	Էջ 2
Գործնական Հաւատք	Էջ 4
Սերտողութիւն Մատթէոսի	Էջ 5
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐԲԷՆ  
(1.21-31)

**Ի**նչպէս պոռնիկ դարձաւ Սիրոնը, հաւատարիմ քաղաքը. ան՝ որ օրինապահութեամբ լեցուն էր. ուր ատեն մը արդարներ կը բնակէին, մինչ հիմա մարդասպաններով բնակուած է: Անարժէք է արծաթը, ո՛վ Երուսաղէմ, ապօրինի շահուած, վաճառորդներդ ջուր կը խառնեն գինիին: Իշխաններդ ինծի դէմ ապստամբած՝ գողերուն գործակից դարձեր են. կաշառք կը սիրեն եւ անիրաւ նուէրներու հետամուտ են. ո՛չ որբերուն իրաւունքը կը պաշտպանեն, ո՛չ ալ այրիներուն դատը կը լսեն: Ուստի այսպէս կ'ըսէ Տէր Տիրակալը, Երկնային Զօրքերու Տէրը, Իսրայէլի Հօր Աստուածը.-

«Վա՛յ ձեզի, Իսրայէլի՛ իշխաններ, որովհետեւ բարկութիւնս պիտի թափեմ ինծի հակառակողներուն վրայ, եւ վրէժխնդրութեամբ պիտի դատեմ ինծի թշնամացողները: Ես ինքս քու մաքրութեանդ պիտի ձեռնարկեմ, եւ ինչպէս հալոցով մետաղը կը գտեն՝ այնպէս ես իմ կրակով պիտի մաքրեմ քեզ. կորուստի պիտի մատնեմ ապստամբներդ, պիտի բնաջնջեմ բոլոր անօրէններդ, եւ բոլոր ամբարտաւանները պիտի խոնարհեցնեմ: Առաջուան ղեկավարներուդ նման ղեկավարներ պիտի կարգեմ քեզի, եւ խորհրդականներ՝ հին օրերու խորհրդականներուդ պէս. եւ այն ատեն «Արդարութեան Քաղաք» պիտի կոչուիս, պիտի կոչուիս «Մայրաքաղաք, Հաւատարիմ Սիրոն»»:

Տէրը իր ողորմութեամբ պիտի փրկէ քու գերեալ գաւակներէդ անոնք՝ որոնք իրաւունք կը պահեն

եւ արդարութիւն կ'ընեն: Բայց անօրէններն ու մեղաւորները միասնաբար պիտի խորտակուին. անոնք որ Տէրը մերժեցին՝ միասնաբար պիտի բնաջնջուին: Ամօթով պիտի մնան անոնք՝ որոնք կուռքեր քանդակեցին ու շինեցին. պիտի ամչնան անոնք որ բեւեկներն պաշտելու հաճեցան, եւ անոնք որոնք աստուածներու նուիրուած պարտէզներ փնտռեցին: Անոնք տերեւաթափ բեւեկներն եւ անջրդի պարտէզի պէս պիտի ըլլան: Ինչպէս վուշի կեղեկները կայծէն կը բռնկին, այնպէս ալ անօրէններն ու մեղաւորները միասնաբար պիտի այրին իրենց գործերէն, եւ ո՛չ ոք պիտի կարենայ գիրենք փրկել:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՀՆՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ  
(7.25-8.11)

**Ա**պ ուրեմն ես ինքս միտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին:

Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց աշխարհ ղրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանշական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմնին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի կարենանք լրիւ գործադրել օրէնքին արդար պահանջները: Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը ղեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեւորը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ

... անոնց  
որ Հոգիին  
թելադրած ձեւով  
կ'ապրին, անոնց  
մտածելակերպը  
հոգեւոր է:

Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա թէ ինչու անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ:

Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ թէ դուք այլեւս մարմնին չէք հետեւիր,

... եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի... պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները:

այլ հոգիին: Իսկ ով որ Քրիստոսի հոգին չունի, անոր չի՛ պատկանիր: Եթէ Քրիստոս ձեր մէջն է, թէպէտեւ ձեր մարմինները պիտի մեռնին, որովհետեւ մեղանչեցիք, սակայն Սուրբ Հոգին դարձեալ կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ արդարացաք:

Այսինքն՝ եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (12.38-45)**

Այն ատեն օրէնքի ուսուցիչներէն եւ փարիսեցիներէն ոմանք ըսին Յիսուսի. «Վարդապետ, կ'ողգենք որ հրաշք մը գործես»: Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ անհաւատարիմ չա՛ր սերունդ. նշան մը կ'ողգէք. բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն զատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր՝ ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր՝ ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը նինուէացիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր

Եւ ինչպէս Յովնան երեք օր՝ ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր՝ ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ:

երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

«Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. “Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ”: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէք որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:



**ՀՈԳԵԳԱԼՈՒԲՍԷՆ ԵՏՔ Դ. ԿԻՐԱԿԻ (ԾԻԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻԱՆԵՐ - ԹԻ 20) Ի ԿԻՐԱԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ I «ՀԱՌՐՎԵՐԱ ԵՄԹԱԿԱՅ ԵՆՔ» (Բ)**

Սիրելի ընթերցող, ահա կը շարունակեմ շնորհքի Աստուածաշնչական հասկացողութեան մասին յօդուածս:

«Շնորհք» բառին լայնագոյն եւ խորագոյն գործածութիւնը Պօղոս առաքեալի նամակներուն մէջ կը գտնենք: Անիկա Պօղոսեան աստուածաբանութեան ամենէն հիմնական եզրերէն մէկն է, որ անմիջականօրէն կը բխէր առաքեալին փորձառութենէն:

Առաքեալը իր իւրաքանչիւր նամակը սկսած է եւ աւարտած է «շնորհք»ի խօսքով: Օրինակներ. Հռոմէացիներուն Նամակէն՝ «Թող մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի» (1.7), «Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ» (16.24): Կորնթացիներուն Ա. Նամակէն՝ «Թող Աստուած մեր Հայրը եւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի» (1.3), «Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ» (16.23): Գաղատացիներուն Նամակէն՝ «Թող ձեզի շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն Հայրն Աստուած եւ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս» (1.3), «մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ» (6.18), եւ այլք:

Ժամանակակից աստուածաբան մը առաքեալին միտքը ներկայացնող իր գիրքին մէջ, պարզ ու յստակ ոճով հետեւեալը գրած է, թէ ան իր ինչ եղած ըլլալը գիտէր, եւ գիտէր՝ թէ ինչ ներքին փոփոխութեան արժանացած է. ըստ իրեն, կարելի չէր որեւէ այլ բացատրութիւն տալ այդ փոփոխութեան քան Աստուծոյ շնորհքին իրեն պարգեւուած ըլլալը: Գիտէր այն գործը որ էր երբեմն ըրած էր, եւ գիտէր այն գործը որ այժմ իրեն տրուած էր կատարելու համար: Ան գիտէր, թէ ինչպէս հալածող մը առաքեալ դարձած էր: Եւ միայն շնորհքը կրնար բացատրել այդ փոխակերպութիւնը: Գիտէր թէ հեթանոս աշխարհը ինչի կը նմանէր, եւ գիտէր թէ մարդ էակը ինչ կրնար ըլլալ Քրիստոսի մէջ (կամ

Քրիստոսով), եւ միակ կարելի բացատրութիւնը այդ վերաստեղծումին՝ Աստուծոյ շնորհքն էր: Պօղոսի համար այն շնորհքը էական էր, որովհետեւ ինք չէր կրնար մոռնալ անոր բերած փոփոխութիւնը իր կեանքին մէջ, եւ ամէն օր կը տեսնէր, թէ շնորհքը ինչ կրնար ընել բոլոր զայն ստացողներու կեանքերուն:

... երկնային շնորհքի բաշխումին աղբիւրը Հայր Աստուածն է:

Իրեն համար Հօր Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի պարզեւած շնորհքը նոյնն էր: Բայց յստակ էր իրեն, որ երկնային շնորհքի բաշխումին աղբիւրը Հայր Աստուածն է: Կորնթացիներուն Ա. Նամակին 1.4-ը կ'ըսէ՝ «Միշտ ձեզի համար շնորհակալութիւն

կը յայտնեմ իմ Աստուծոյս՝ այն շնորհքին համար, որ ձեզի տուաւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ»: Սակայն այս «միջոցաւ»ը պէտք է հասկնալ այնպէս՝ որպէս թէ ան շնորհքի փոխանցման խողովակ մըն էր: Քրիստոս ինք Աստուծոյ կողմէ մարդոց տրուած շնորհաց շնորհն է: Ան Հօրմէ գալով՝ իր հարստութիւնէն աղքատացաւ, որպէսզի իր աղքատանալով մարդը հարստացնէ (Հմմտ Բ. Կր 8.9):

Շնորհքը մարդոց տրուած է եւ կը տրուի ձերօրէն: Մարդկային արժանիքները, պատուիրանապահութիւնը եւ բարի գործերը չեն, որ կը յաջողին ձեռք ձգել երկնապարզեւ Քրիստոսեան շնորհքը, այլ Աստուծոյ առատաձեռնութիւնը զայն կու տայ իբր ձեր նուէր:

Շնորհքը հիմնականօրէն կը տարբերի Օրէնքէն: Հրէական բարեպաշտութեան մէջ, Օրէնքին հնազանդութիւնը կը դիտուէր որպէս պայման Աստուծոյ կողմէ փրկուելու: Եթէ Օրէնքին պատուիրանները պահես եւ գործադրես՝ Աստուած քեզ կը փրկէ. ասիկա էր հաւատարիքը:

Ինչո՞ւ էր Օրէնքը: Առաքեալը գրած է, թէ Օրէնքը տրուած էր «որպէսզի մարդիկ իրենց յանցանքները ճանչնան» (Գղ 3.19: Հմմտ Հռ 3.19): Ուրեմն, Օրէնքի պատուիրանները յանցանքներուն ճանաչումը կը բերէին եւ մարդ էակի յանցաւորութեան գիտակցութիւնը կը պահէին: Օրէնքին գաղափարը կապուած է յանցանքներուն, անոնցմէ անանջատելի է: Օրէնքը կայ՝ որովհետեւ յանցանքները կան. յանցանքները կան՝ որովհետեւ Օրէնքը կը տեսնէ զանոնք: Օրէնքի կրօնականութիւնը եթէ կարենար փրկել մարդ էակը, ապա Յիսուսի մարդեղութիւնը, չարչարանքները, խաչելութիւնը եւ յարութիւնը «հաւառ սխալ մը» պիտի ըլլային, իսկ իր ինքնընծայումը՝ «կատարելապէս անիմաստ գոհ մը»:

Այս ըսուածները չեն ենթադրեր բարի գործերէ հրաժարել, ոչ ալ կ'ենթադրեն՝ թէ պատուիրանները պահելը անկարելոր է: Այդպիսի հասկացողութիւն մը ճիշդ պիտի չըլլար: Առաքեալը ըսած է. «Աստուած իր շնորհքը յայտնեց՝ որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը մեզ կը մղէ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս իր փառքով պիտի յայտնուի» (Տիտ 2.11-12): Անոր միտքը այն է, թէ փրկութիւնը պէտք է կապել բարի գործերու կատարման եւ կամ պատուիրանները պահելուն: Աստուծոյ պարզեւ փրկութիւնը կարելի է առեւտրական տրամաբանութեան մը վրայ հիմնել. փրկութիւնը չի նմանիր գրամ տալով իր

մը գնելու, անիկա Աստուծոյ բացարձակ ազատութենէն կու գայ, եւ կու գայ իբր ձեր նուէր: Փրկութիւնը ոչ արժանիքով եւ ոչ ալ գործերով կը շահուի (Եփ 2.90): Եւ ան որ շնորհքին ենթակայ կ'ըլլայ, բարի գործերը կ'ընէ եւ պատուիրանները կը գործադրէ ոչ թէ առեւտրական տրամաբանութեամբ, այլ որովհետեւ իր ստացած շնորհքը գինք կը մղէ Աստուծոյ հետ եւ մարդոց հետ ուղիղ յարաբերութեան մէջ ըլլալու: Աստուծոյ փրկութիւնը չէ պայմանաւորուած «պէտք է այս ընես, պէտք է այն ընես» ներով, այլ ձեր նուէր մըն է, որ անձին կեանքը արմատականօրէն կը փոխէ:

Առաքեալը խոր զգացողութեամբ տեսած է, որ Աստուծոյ շնորհքը մարդ էակը կը գնէ հսկայական պատասխանատուութեան առջեւ եւ ոչ թէ պարտաւորութեան տակ:

Այդ պատասխանատուութիւնն է՝ կեանքը ապրիլ այնպէս, որ տրուած շնորհքը պարապի չեթթայ:

Աստուծոյ շնորհքը փրկարար է. անիկա «հոգեւորապէս մեռած»ը Քրիստոսի հետ կը յարուցանէ եւ Քրիստոսի հետ միասին երկինքի մէջ կը նստեցնէ (Հմմտ Եփ 2.4, 6): Այսպէս կը հաւատայ եւ ըստ այսմ կ'ապրի շնորհընկալ մարդ էակը, կը պատգամէ Պօղոս առաքեալ:

Այդ պատասխանատուութիւնն է՝ կեանքը ապրիլ այնպէս, որ տրուած շնորհքը պարապի չեթթայ:

II

Օրուայ Ս. Գրային ընթերցումները. Եսայի Մարգարէն՝ 1.21-31: Հոմէացիներուն Նամակէն՝ 7.25-8.11: Մատթէոսի Աւետարանէն՝ 12.38-45:

Առաջին ընթերցումը: Մարգարէութիւնը կը խօսի Երուսաղէմի բարոյական ապականումին մասին: Անոր իշխաններուն՝ Աստուծոյ դէմ ապստամբութեան, եւ գործած ընկերային անարդարութիւններուն: Կը յայտնէ՝ թէ այս մեղանշումները կը հրաւիրեն Աստուծոյ «վրէժխնդրութիւն»ը եւ թէ ապստամբները պիտի կորստեան մատնուին, անօրէնները պիտի բնաջնջուին ու ամբարտաւանները պիտի ցածնան: Իսկ իրաւունքը պահողները եւ արդարութիւն ընողները պիտի փրկուին:

Աստուած «առաջուան» ղեկավարներուն պէս ղեկավարներ եւ խորհրդականներուն պէս խորհրդականներ պիտի կարգէ, եւ այն ատեն Երուսաղէմը դարձեալ «արդարութեան քաղաք» պիտի կոչուի:

Երկրորդ ընթերցումը: Առաքեալը կը բացատրէ, թէ Օրէնքը չէր կրնար «մեղքի եւ մահուան ենթակայութեանէն» ազատել եւ կեանք տալ մարդուն՝ «մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով»: Այդ կենսատու ազատութիւնը աստուածային միջամտութեան կը կարօտէր, ուստի Աստուած իր Որդին զրկեց մեղքը պարտութեան մատնելու համար: Քրիստոսի առաքելութեան նպատակն էր մարդ էակին կեանքը վերածել հոգեւորի, զայն դուրս բերել մարմնական պահանջներէն եւ մտածելակերպէն: Հոգեւորապէս ապրողը Ս. Հոգիին թելադրած ձեւով կ'ապրի եւ «մարմնականին կառչած» է, այլ Աստուծոյ կը հնազանդի:

Երրորդ ընթերցումը: Յիսուս հակազդելով Օրէնքի ուսուցիչներու եւ փարիսեցիներու չարամիտ

կասկածամտութեան, կը խօսի իր յարութեան եւ Աստուծոյ Դատաստանին մասին: Ինքզինք կը յայտնէ իբր Յովնան մարգարէէն «աւելի մեծ մէկը», նաեւ Սողոմոն թագաւորէն «աւելի մեծ մէկը»: Առաջինին պարագային՝ նինուէացիները լսելով քարոզութիւնը զղջացին իրենց մեղքերուն համար: Իսկ երկրորդին պարագային՝ հարաւի թագուհին եկաւ լսելու անոր իմաստուն ուսուցումները: Յիսուս զինք փորձելու եկած կրօնական ղեկավարները կը սաստէ իբր Աստուծոյ «անհաւատարիմ չար սերունդ», որուն հոգին բազում դեւերով բնակուած է եւ այդ պատճառով ալ՝ անոր վախճանը շատ շատ գէշ պիտի ըլլայ:

Այս ընթերցումները գգասութեան հրաւեր են: Հոգեւորապէս մաքուր ըլլալը ամենօրեայ պատասխանատուութիւն է: «Ես մաքուր էի», ըսելով՝ կարելի չէ մաքուր ըլլալ: Մարմնական պահանջները եւ մտածելակերպը միշտ կը փորձեն Աստուծոյ հաւատարիմները: Եւ եթէ անոնք գոյումի եւ իմաստութեան ոգիով չլեցնեն իրենց ժամանակը՝ իրենցմէ հեռացած եւ «անջրդի վայրեր» գացած չար ոգին ետ կը վերադառնայ եւ առաւել աղէտ կը գործէ: Զոյումի եւ իմաստութեան ոգիին մէջ ըլլալ կը նշանակէ՝ 1.- Աստուծոյ հնազանդ ապրիլ. 2.- Անոր Որդիին գոհողութիւնը ի դերեւ չհանել. եւ 3.- Նմանին իրաւունքը յարգել:

ՀՆԱԻՒ  
ԳՔ



## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՊՈԹՔ

**Հարցում.** Արդէն ամէն Կիրակի օր եկեղեցի կ'երթամ: Կարեւոր է որ ամէն օր աղօթեմ:

**Պատասխան.** Աղօթքը մեր հոգեւոր կեանքի թթուածինն (oxygen) է: Անոր միջոցաւ մեր հոգիները միշտ կը սնանին Աստուծոյ շունչով, կը թարմանան եւ մեր համակ կեանքերը կը կերպարանափոխուին: Աղօթքը Աստուծոյ հետ մեր ունեցած կապը կը վերանորոգէ եւ մեր անկեալ բնութեան պատճառ՝ մեզ Անկէ բաժնող միջոցը կը կարեցնէ, նոյնիսկ մեզ միացնելով Անոր:

Որքան ընդունիմք մեր մեղաւոր վիճակն ու մեր ինքնաթեր հակումը դէպի մեղք, այնքան կը համոզուինք որ Կիրակիէ Կիրակի աղօթելը բաւարար չէ: Կարելի՞ է որ օդանաւ մը ճամբորդէ ամբողջ շաբաթ մը առանց դադարի: Իր ճամբան շարունակելու համար ան պէտք ունի կենալու եւ վառելանիւթ ամբարելու: Մեր հոգեւոր կեանքն ալ նոյնպէս է: Հոգեւոր սնունդի պէտք ունինք ամէն օր, որպէսզի կարողանանք շարունակել մեր հոգեւոր ճամբորդութիւնը այս աշխարհի վրայ: Աղօթքի պէտք ունինք վերականգնելու Աստուծոյ հետ մեր կապը,

մեր հաւատքը, մեր յոյսն ու վստահութիւնը՝ Իր կամքի քարութեան նկատմամբ:

Մինչ հաւաքական աղօթքը մեզ եկեղեցւոյ միւս անդամներուն միջոցաւ Աստուծոյ կը կապէ, անհատական աղօթքը ուղղակիօրէն այդ կապը կը հաստատէ Անոր հետ: Այո, խմբային մարգարեալներու պատրաստուելու համար մարգիկը խումբի միւս անդամներուն հետ կը մարգուի, բայց նաեւ եթէ բարձր չափանիշի կը հետեւի՝ առանձինն ալ կը մարգուի:

Մեր հոգեւոր կեանքերը չեն դադարի Կիրակիներու միջեւ, այլ կը շարունակուին եւ սեփական՝ մենիկ հանդիպում կ'աղերսեն Աստուծոյ հետ, հոգեւոր անմահ համար:

Աստուած կը սպասէ որ ամբողջական ուշադրութեամբ եւ երկիւղով տրամադրելի դառնանք Իրեն ու վայելենք իր ներկայութիւնը ամէն օր: Բոլոր սուրբերը նախ մշտական աղօթողներ եղած են: Անոնց գործունէութիւնը հարուստ է աղօթքի արդիւնք եղող հոգեւոր ներդաշնակութեամբ: Աստուած մեզի հետ չէ միայն Կիրակի օր եկեղեցւոյ մէջ, այլ նաեւ՝ մեր կեանքի իւրաքանչիւր երկվայրկեանին եւ ամենուրեք:

Աղօթքի կեանք մշակել նախ կը նշանակէ միշտ եւ ամենուրեք *յիշել* Աստուծոյ ներկայութիւնը, եւ սպա թոյլ տալ որ այդ ներկայութիւնը ներգործէ մեր կեանքին եւ գործունէութեան մէջ: Աղօթելը՝ յիշելու այդ վարժութիւնը սովորութեան վերածելն է եւ *գիտակից* դառնալն է Աստուծոյ ներկայութեան՝ նուազագոյնը երբ աղօթքի կը կենանք:

Կրկնութեամբ՝ ժամանակի ընթացքին, վարժութեամբ եւ Աստուծոյ շնորհով այս կրթութիւնը կը թափանցէ մեր առօրեայ կեանքէն ներս որպէս կենդանի փորձառութիւն: Մեր անձնական աղօթքին յատուկ ժամանակ տրամադրելով, կ'ընդունինք Իրմէ մեր կախեալ ըլլալը, կը յայտնենք մեր յանձնարարութիւնը հանդիպելու Իրեն եւ կ'ընդունինք Զինք՝ նախ մեր աղօթքի ժամանակ եւ սպա ընդհանրապէս մեր կեանքին մէջ: Այսպիսով կը մշակենք յատուկ յարաբերութիւն մը՝ բարեկամութիւն մը Աստուծոյ հետ որ կը դառնայ մնայուն ուղղիչ ուժը մեր ամենօրեայ կեանքին: Եւ երբ Կիրակի օրերը եկեղեցի կ'երթանք, հոգեւորապէս պատրաստ ենք աւելի խորունկ հաղորդութեան մը մեր եկեղեցւոյ միւս անդամներուն եւ Աստուծոյ հետ:

Յիսուս ըսաւ. «*Իո՞ւն երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ, գոց՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ՛ քու երկնաւոր Հօրդ*» (Մտ 6.6): Աստուած կը բնակի մեր սրտերուն մէջ: Աղօթքը այդ ձգտումն է եւ բացուիլը Աստուծոյ շնորհին առջեւ որպէսզի ընդունինք Սուրբ Հոգին, հաղորդակից ըլլանք Անոր կամքին եւ կարենանք հաստատ ըսել Պօղոս առաքեալին հետ. «*Ես այսպէս կը վագեմ, ահա, եւ ո՛չ թէ անորոշ ուղղութեամբ*» (Ա. Կր 9.26):

Կ.Ն.

**Աղօթքի կեանք  
մշակել նախ կը  
նշանակէ միշտ  
եւ ամէնուրեք  
յիշել Աստուծոյ  
ներկայութիւնը**



## ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ  
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

### Մոգերուն Այծը:

«Հերովդէս թագաւորի օրերուն էր, որ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ: Եւ ահա արեւելէն մոգեր եկան Երուսաղէմ եւ հարցուցին.– Ո՞ր է Հրեաներու նորածին թագաւորը. մենք տեսանք անոր աստղը արեւելի մէջ եւ եկանք երկրպագելու իրեն:

Երբ Հերովդէս թագաւոր լսեց ասիկա՝ խռովեցաւ, եւ իրեն հետ՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները: Կանչեց ժողովուրդի բոլոր բնակիչները: Կանչեց ժողովուրդի բոլոր աւագ քահանաներն ու Օրէմի ուսուցիչները եւ հարցուց անոնց, թէ ո՞ւր պիտի ծնէր Քրիստոսը:

Անոնք պատասխանեցին.– Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ, որովհետեւ Միքիա մարգարէն այսպէս գրած է.

*Դո՛ւն, Բեթլեհէ՛մ, Յուդայի քաղաք,  
հռչակով նուազ չես Յուդայի միւս քաղաքներէն.  
որովհետեւ քեզմէ պիտի ելլէ իշխան մը,  
որ պիտի հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայէլը:*

Այն ատեն Հերովդէս գաղտնաբար իր մօտ կանչեց մոգերը եւ անոնցմէ ստուգեց աստղին երեւելուն ժամանակը: Ապա գնումք Բեթլեհէմ դրկեց, պատուիրելով.– Գացէ՛ք եւ ստոյգ տեղեկութիւններ փոխելով գտէ՛ք երեխան, եւ երբ գտնէ՛ք՝ ինծի իմացուցէ՛ք, որպէսզի ե՛ս ալ գամ եւ երկրպագեմ իրեն:

Թագաւորին այս հրահանգը լսելէ ետք, մոգերը մեկնեցան: Անոնք չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն աստղը, որ արեւելի մէջ տեսնելին. եւ ահա աստղը առաջնորդեց զիրենք մինչեւ որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ, ուր երեխան կը գտնուէր: Երբ տուն մտան, տեսան երեխան իր մօրը՝ Մարիամի հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով երկրպագեցին մանուկին: Ապա բացին իրենց արկերը եւ Յիսուսի ընծայեցին իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս:

Յետոյ ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը, առանց Հերովդէսի հանդիպելու, ինչպէս որ Աստուած երազի մը մէջ հրահանգեց իրենց» (2.1-12):

**Այս Հերովդէսը պատմութեան մէջ «Մեծն» կոչուած է:**

Ան հռոմէացիներուն ճորտ թագաւոր մըն էր: Ծանչցուած էր «Հրեաներու թագաւոր» անունով: Թէեւ իր դիւանագիտական, զինուորական եւ շինարարական իրագործումներով մեծ, սակայն յուր վարք եւ ոճրագործ ընթացք պիտի ունենար: Հերովդէսի գահակալութեան վերջին տարիներուն է, որ կը ծնէր Յիսուս:

«Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ», կ'ըսէ՝ զանազանելու համար Գալիլիայի համանուն քաղաքէն: Հրէաստանի Բեթլեհէմը Դաւիթ թագաւորի ծննդավայրն էր (Ա. Թ. 16.1). անիկա Երուսաղէմէն շուրջ եօթը քիլոմետր հարաւ-արեւմուտք կը գտնուի: Բեթլեհէմ կը նշանակէ «տուն հացի»: Անոր հին անունը Եփրաթա էր,

որ «պողաբեր» կը նշանակէ: Բեթլեհէմ չըջապատուած էր որթատունկերով, թզենիներով եւ նշենիներով, իսկ հովիտները առատ ցորեն կը բերէին:

«Եւ ահա արեւելքէն մոգեր եկան Երուսաղէմ»: «Արեւելքէն» ուրկէ՞ հասկնալ: Ըստ ոմանց, անիկա Արաբական աշխարհն էր. ըստ ուրիշներու՝ Բաբելոնը. ըստ այլոց՝ Պարսկաստանը: Կան դեռ ուրիշ ենթադրութիւններ ալ, սակայն հակառակ բոլոր վարկածներուն, յստակ եւ վերջնական բան կարելի չէ ըսել: Երեքը մէ՞կ

...մինչ հրեայ առաջնորդները մերժեցին իրենց Մեսիան, հեթանոս աշխարհը գայն ընդունեց որպէս իր Քրիստոսը:

երկրէ Էին, թէ տարբեր երկիրներէ: Կը թուի, թէ աւետարանիչը չէր հետաքրքրուած անոնց մեկնակէտ աշխարհագրական վայրով կամ վայրերով: Համաձայն արդի մեկնիչներու մեծամասնութեան, աւետարանիչին միտքը ուրիշ բան էր: Գուցէ «արեւելքէն» եկող մոգերը՝ իբր հեթանոս աշխարհի հոգեւոր ընտրանի՝ աւետարանիչի մտքին մէջ խորհրդանիշն էին ոչ-հրէական աշխարհի ամբողջ իմաստութեան: Ան արձանագրելով մոգերուն Բեթլեհէմ գալը եւ Յիսուսի առջեւ երկրպագելը՝ կ'ուզէր ըսել, թէ մինչ հրեայ առաջնորդները մերժեցին իրենց Մեսիան, հեթանոս աշխարհը գայն ընդունեց որպէս իր Քրիստոսը:

Կարճ բացատրութիւն մը՝ նաեւ մոգ անուան մասին: Անիկա պաշտօն մը կը նշէր: Մոգերը կրօնական սպասարկուներ էին: Անունը սկզբնապէս գործածուած է Զրադաշտական

աւետարանիչը մոգերը չէր տեսած իբր կախարդներ, այլ տեսած էր իբր իմաստուններ՝ որոնք «նորածին քագաւորը» կը փնտռեն:

քուրմերու համար, որոնք իմաստուններ եւ երագներու մեկնաբաններն էին: Անոնք ճանչցուած էին նաեւ որպէս աստղագուշակներ: Մոգերը աստղերուն նայելով գուշակութիւններ կ'ընէին: Քրիստոսի ծնունդը կանխող երբայական համոզումին մէջ՝ մոգերը կախարդներ

էին: Բայց յստակ է, որ աւետարանիչը մոգերը չէր տեսած իբր կախարդներ, այլ տեսած էր իբր իմաստուններ՝ որոնք «նորածին թագաւորը» կը փնտռեն: Եւ ինչպէս այլ տեղ գրած է, թէ «փնտռողը պիտի գտնէ» (Մտ 7.8), մոգերը կը գտնեն մանուկ Յիսուսը:

Տարածուած աւանդութիւն մըն է նաեւ, թէ Յիսուսին երկրպագելու եկող մոգերը թագաւորներ էին: Աւետարանին մէջ այդ մասին ոչինչ կը կարդանք: Հին աշխարհին մէջ ընդհանրացած էր, որ քրմապետներ կրնային նոյն ժամանակ ցեղապետներ ըլլալ, կամ՝ իշխանապետներ, կամ՝ թագաւորներ: Սակայն, արդարեւ, աւելորդ շեղում մը պիտի ըլլայ հիմա այդ մասին խօսիլը, որովհետեւ մեր հատուածին օգտակարութիւն մը չի կրնար ունենալ:

Նաեւ ընդհանրացած է մոգերը երեք անձեր երեւակայելը. այդ մասին ալ աւետարանիչը բան չէ ըսած:

Մոգերը Երուսաղէմ գալով կը հարցնեն. «Ո՞ւր է հրեաներու նորածին թագաւորը. մենք տեսանք անոր աստղը արեւելքի մէջ եւ եկանք երկրպագելու իրեն»: Թէ ի՞նչ աստղի մասին է

անոնց խօսքը, քիչ անդին պիտի բացատրեմ: Բայց նախքան այդ՝ հետաքրքրական է, որ Հերովդէս անտեղեակ էր պատահածէն: Եւ ան կը խոսիլ եւ իրեն հետ՝ «Երուսաղէմի բոլոր բնակիչները»:

Յունարէն բնագիրին մէջ «խոսվեցաւ»-ին տեղ կայ «էթարախթէ» բայը, որ ներքին տակնուվրայութենէ աւելի՝ ընդդիմութեան իմաստը կը թելադրէ: Անոնց ընդդիմութիւնը Աստուծոյ դէմ ուղղուած էր, որովհետեւ մերժում էր Անոր Որդիին:

Հերովդէս չէր կրնար իր տէրութեան մէջ ուրիշ թագաւոր մը հանդուրժել, երբ մանաւանդ առանց վարանումի սպաննել տուած էր երկուքը իր զաւակներէն, եւ շարք մը իշխանաւորներ անհետ կորստեան մատնած էր: Իրեն համար ցնցիչ էր լսել մէկու մը մասին, որուն իր տիրադոսը կը տրուէր. Հրեաներու թագաւոր:

«Երուսաղէմացիներ»-ով արդար է հասկնալ Հերովդէսի շրջապատը, թէ՛ կրօնական եւ թէ՛ աշխարհիկ իշխանութեան մարդիկը: Անոնք իրենց դիրքերը կորսնցնելու տագնապը ունեցան:

Հերովդէս կը կանչէր աւագ քահանաները եւ Օրէնքի ուսուցիչները կամ դպիրները՝ հարցնելու համար, թէ Քրիստոս ո՞ւր պիտի ծնէր:

Աւագ քահանաները եւ Օրէնքի ուսուցիչները կամ դպիրները, երէցներուն հետ միասին, որոնք այստեղ չեն յիշուած, կը կազմէին հրեաներու բարձրագոյն ժողովը կամ Սանհետրիոնը, որ եօթանասուններկու անդամ կը հաշուէր: Սանհետրիոնը կը զբաղէր ազգին հարցերով: Անիկա թագաւորին հաճելի քաղաքականութիւն մը ունէր: Երբ Հրէական ճորտ թագաւորութեան վերացումով՝ երկիրը Հռոմէական կայսրութեան անմիջական տիրապետութեան տակ անցաւ (Հերովդէսի որդւոյն Արքեղայոսի մահէն՝ Յ.Ք. 6-էն ետք) եւ դարձաւ կառավարիչներով դեկավարուող նահանգ, Սանհետրիոնին դերը աւելի մեծցաւ: Ծննդեան դրուագին մէջ երէցներու բացակայութիւնը հասկնալի է այն իրողութեամբ՝ որ թագաւորին հարցը զուտ Ս. Գրային էր, եւ բնականօրէն թագաւորը պիտի դիմէր կրօնաւորներուն:

Աւագ քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն ուղղուած թագաւորին հարցումն էր թէ՛ ո՞ւր պիտի ծնէր Քրիստոս:

Հետաքրքրական է, որ մինչ մոգերը գալով հարցուցին «նորածին թագաւոր»-ին մասին, Հերովդէս կը հարցնէր Քրիստոսի ծննդավայրին մասին: Մոգերուն խօսքը թագաւորի մը կը վերաբերի, որուն «աստղը» տեսած էին արեւելքի մէջ: Հերովդէս արագօրէն կ'անդրադառնար, որ խօսքը ոչ թէ սովորական թագաւորի մը մասին է, այլ անձի մը՝ որուն արդէն երբայցի ժողովուրդը

երկար դարերէ անձկութեամբ կը սպասէր: Ինչպէ՞ս է, որ ան «նորածին թագաւոր» ականարկութեան մէջ պիտի տեսնէր Քրիստոսի ծնունդը՝ աւետարանիչը բացատրութիւն չի տար: Բայց ծանօթ է, որ այն ժամանակներուն Մեսիայի գալստեան մեծ ակնկալութիւն կար: Եւ շատ հաւանաբար կը շրջէր Թւ 24.17-ի մարգարէութիւնը թէ՛ «Յակոբէն աստղ մը պիտի ծագի»: Հետեւաբար թագաւորի մտքին մէջ նորածինը կը կապուէր Մեսիային: Ան Սրբազան գիրքերէն հասկցողը չէր, ուստի Աւագ քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն կը հարցնէր, եւ անոնք ալ կը պատասխանէին, թէ Քրիստոս Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ պիտի ծնէր, որովհետեւ Միքիա մարգարէն այդպէս գրած էր:

Մարգարէին Հին Կտակարանեան կանխա-սացութիւնը տարբեր է աւետարանիչին մէջ-բերածէն: Հին Կտակարանին մէջ այսպէս ըսուած է. «Եւ դ՛ն, ո՛վ Բեթլեհէմ, տուն Եփրաթա, թէեւ Յուդայի հազարաւորներուն մէջ փոքր ես, բայց քեզմէ պիտի ելլէ ան, որ Իսրայէլի վրայ իշխան պիտի ըլլայ» (Մք 5.2): Աւետարանիչի մէջբերածը մեկնաբանական տարբերակում մըն է եւ բնագրային համարին միտք բանին չ'այլայլեր:

Ուշագրաւ է, որ Միքիա մարգարէ՝ «թագաւոր պիտի ըլլայ» չ'ըսեր, այլ՝ «իշխան պիտի ըլլայ»:

Ինչպէ՞ս է որ «իշխան պիտի ըլլայ» խօսքը հասկցուած է իբր թագաւոր պիտի ըլլայ: Միքիա մարգարէին համար «թագաւոր»ը Տէրը ինքն է. Ան է որ «Սիոն լեռան վրայ պիտի թագաւորէ» (Մք 4.7): Միքիա յստակօրէն գրած է թէ՛ «Ո՛վ Յակոբ, ամէնքդ անշուշտ պիտի հաւաքեմ, Իսրայէլի մնացորդը պիտի հաւաքեմ, Բօսրայի ոչխարներուն պէս, իրենց փարախին մէջ եղող հօտերուն պէս մէկտեղ պիտի բերեմ... Անոնց թագաւորը անոնց առջեւ անցաւ: Տէրը իբրեւ անոնց գլուխը՝ առջեւէն կ'երթար» (Մք 2.12, 13): Արդ, Աւագ քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն մարգարէական հատուածին ընկալումը՝ որպէս մեսիա-թագաւորի կանխասացութիւն՝ ճիշդ էր:

Հերովդէս գաղտնաբար իր մօտ կը կանչէ մոգերը եւ անոնցմէ կը ստուգէ աստղին երեւելուն ժամանակը: Ապա գանոնք Բեթլեհէմ կը զրկէ, պատուիրելով որ անոնք երթան «ստոյգ տեղեկութիւններ» քաղելով երեխան գտնեն, եւ երբ գտնեն՝ իրեն իմացնեն, որպէսզի ինք ալ երկրպագելու երթայ:

Մոգերը կը մեկնին, եւ ճամբուն վրայ չափազանց կ'ուրախանան, երբ կրկին կը տեսնեն «այն աստղը, որ արեւելքի մէջ տեսեր էին»: Անիկա մոգերը առաջնորդելով կ'երթայ եւ կը կենայ այն վայրին վրայ կամ տունին՝ ուր երեխան կը գտնուէր:

Ուշագրաւ է, որ չըսուիր «աստղ մը», այլ կ'ըսուի՝ «աստղը»: Ի՞նչ է այս աստղը, որ ահա երկրորդ անգամ ըլլալով կը յայտնուի մոգերուն: Անիկա բնութեան աստղերէն մէկը չի կրնար ըլլալ: Այս աստղը կը յայտնուի, կ'առաջնորդէ, եւ կ'աներեւութանայ: Երկնքին վրայ շարժող աստղ մը չկայ, որ կու գայ եւ տունի մը վրայ կը կենայ: Ուրեմն, այս աստղը Աստուծոյ զրկուած դեսպան մըն է, այլ խօսքով՝ հրեշտակ մըն է: Յայտնութեան գիրքի առաջին գլխուն վերջաւորութեան կը կարդանք հետեւեալը. «(Մարգու Որգին) իր աջ ձեռքին մէջ բռնած էր եօթը աստղեր» (Յյա 1.16).

այս աստղը  
Աստուծոյ զրկուած  
դեսպան մըն է, այլ  
խօսքով՝ հրեշտակ  
մըն է:

ապա բացատրուած է՝ «Եօթը աստղերը եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են» (Նոյն, 20): Այս օրինակը մեզի բացայայտօրէն ցոյց կու տայ, թէ հրեշտակի խորհրդանիշ եղած է աստղը: Եւ մոգերը առաջնորդող աստղը՝ հրեշտակ մըն էր:

Մոգերը կ'երկրպագեն մանուկին եւ իրենց արկղները բանալով անոր ընծայ կը մատուցեն ոսկի, կնդրուկ եւ զմուռս:

Այս նուէրները իմաստ ունին: Ի՞նչ է ըսուածը: Ոսկին՝ թագաւորութիւն կը խորհրդանշէ. կնդրուկը՝ քահանայութիւն. իսկ զմուռսը՝ փրկարար գոհողութիւնը (որովհետեւ զմուռսը կը գործածուէր իբր դեղ կամ դիակներու հականեխիչ. անիկա խորհրդանշանն էր Յիսուսի չարչարանքներուն, խաչելութեան եւ թաղման): Նկատի ունենալով, որ մոգերը անծանօթ երկիրէ կամ երկիրներէ կու գան, իրենց մատուցած նուէրները կը վկայեն, թէ երկրպագեալ մանուկ Փրկիչը տիեզերական թագաւորը եւ քահանան պիտի ըլլայ: Քրիստոս Փրկիչ-թագաւորն է իր ժողովուրդին, որուն անդամները կը բաղկանան բոլոր ազգերէն: Նաեւ ան Փրկիչ-քահանան է իր ժողովուրդին, որովհետեւ ինքն է, որ իրեն յանձնուած հօտը Աստուծոյ կ'ընծայէ:

(Շարունակելի 5)



## ՅԱԶՈՐԻ ԸՄԲԹՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ

Յիկզարթի, 12 Յունիս 2008

Տօն Ս. Թարգմանիչներու  
Սահակի եւ Մեսրոպի

11.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈՐ քոյրերու ժողով

Շաբաթ, 14 Յունիս 2008

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝

Յայ երիտասարդներուն համար

Կիրակի, 15 Յունիս 2008

Տօն Ս. Աստուածածնի Տուփի Գիւտին

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ԱՐՏԱՅՏՈՒԷՅԷՔ  
[eglise58@sourphagop.com](mailto:eglise58@sourphagop.com)

ՅԱՏՈՒԿ ՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ  
ԱՐԴԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ՝

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ  
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԱՍԵՆ ՇԱՐԱԹ ԵՐԵԿՈՆԵՐԸ  
ԺԱՄԸ 6:30

ՀԻՔԱՌԱՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ  
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւիմ:



ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿԸ Ե-ԱՄԱՆԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՂԱՐԿԵՅԷՔ  
[eglise58@sourphagop.com](mailto:eglise58@sourphagop.com)-ԻՆ

ՅԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՅ  
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ  
15 ՅՈՒՆԻՍ 2008  
ԺԱՄԸ 12.00

Յամայնքես հայրեր պիտի  
մասնակցին արարողութեան

Յրաւեր՝ բոլորին